ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/164

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Թվանչկ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Եղիազարյանի, Ռ. Մարդանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, լվացքատան ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9852-2021 գրությամբ «Թվանչկ»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 11.06.2021թ.-ի թիվ 01/10-435 գրության հիման վրա, 17.06.2021թ.-ին «Թվանչկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը 18.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/164 համարի ծածկագիրը:

25.06.2021թ.-ին և 09.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.07.2021թ.-ին:

2. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 11.06.2021թ.-ի թիվ 01/10-435 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2021թ. կարիքների համար կազմակերպվել է ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով լվացքատան ծառայությունների գնման ընթացակարգ, որի արդյունքում 29 դեկտեմբերի 2020թ.-ին «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև

Պատվիրատու) և «Թվանչկ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Կատարող) միջև կնքվել է լվացքատան ծառայությունների գնման թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 պայմանագիր:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ Հետվիրահատական անկողնային պարագաների /ինֆեկցիայով, արյունով և թարախով/ լվացում, բարձերի քիմ մաքրում: Թաց լվացքի քիմ մաքրում, ստերիլիզացիա: Լվացքից հետո անկողնային պարագաները պետք է պահպանված լինեն փարժեք տեսքով՝ լաքաների, արյան և բետադինի հետքերը պետք է մաքրված լինեն: Լվացված լվացքը չպետք է գունաթափված փնի: Տհաճ հոտի առկայություն չպետք է փնի: Կճուտարողը անկողնային պարագաները Պատվիրատուին հանձնում է արդուկած և չոր վիճակում: Եթե անկողնային պարագաները մնասվեն Կատարողի կողմից, ապա Կատարողը պարտավորվում է փոխհատուցել նորով:

Կատարողի կողմից ծառայությունը կատարվել է չպահպանվելով տեխնիկական բնութագրի պահանջները, այն է՝ լվացքը հանձնվել է խոնավ վիճակում, վատ հոտով, լաքաներով և նոր սպիտակեղենները մնասված:

Պատվիրատուն ծանուցել է Կատարողին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները կամ փոխարինել նորով, սակայն Կատարողի կողմից քայլեր չեն ձեռնարկվել:

Հաշվի առնելով՝

պայմանագրի 2.3.1 կետը Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

նույն կետի ա) ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն մասնակի միակողմանի լուծում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Թվանչկ» ՍՊԸ-ի միչև 29.12.2020թ. կնքված թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում և նույն օրը ուղարկվել Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Թվանչկ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Թվանչկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Թվանչկ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9852-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել 1 հրավիրված նիստին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Ներկայացված գրությամբ՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Թվանչկ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՅ-ԼՕ-2021/155 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 11.06.2021թ. թիվ 01/10-435 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. 2020 թվականի նոյեմբերի 17-ին Պատվիրատուն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետև նաև՝ էլեկտրոնային համակարգ) հրապարակվել է թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհտև նաև՝ Մրցույթ):

1.2. Ի թիվս այլ մասնաակիցների Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Թվանչկ» ՍՊԸ-ն: Թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրված Մրցույթի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ-ի նիստում Մասնակիցը ճանաչվել է ընտրված մասնակից:

1.3. Մրացույթի հրավերի (այսուհեև նաև՝ Հրավեր) 10.1, 10.2 և 10.3 կետերի համաձայն՝ ընտրված (հաղթող) մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է «Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները (այսուհետև միասին նաև՝ Ապահովումներ)՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ապահովումները հանդիսանում են պայմանագրի կատարման ապահովումներ, իսկ գումարային՝ տոկոսային արտահայտությամբ կազմում են Մարցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրի գնի 110 տոկոսը, քանի որ Հրավերի 10.1, 10.2 և 10.3 կետերի համաձայն՝ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին իսկ պայմանագրի ապահովման չափը կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսին:

1.4. Մասնակիցը չի ներկայացրել Հրավերի 10.2 և 10.3 կետերով սահմանված՝ Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները:

1.5. Մրցույթի արդյունքում, 29.12.2020թ.-ին Մասնակցի և Պատվիրատուի միջև կնքվել է թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով պայմանագիր (այսուհետև նաև՝ Պայմանագիր): Պայմանագիրը կնքվել է առանց բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու:

1.6. 04.06.2021թ.-ին fanarjian_oncology@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից Մասնակիցը իր tvanchk@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ստացել է ազատ ոճով գրված չստորագրված գրություն (այսուհետև նաև՝ Գրություն), որին կցված էին նաև անկողնային սպիտակեղենի նկարներ: Այդ գրությունում, ի թիվ այլնի, նշված էր, որ հաշվի առնելով նկարում ներկայացված Մասնակցի կողմից մատուցած ծառայությունը, առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները կամ փոխարինել նորով, ինչպես պահանջվել է տեխնիկական բնութագրով: fanarjian_oncology@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեն ոչ Հրավերում, ոչ էլ Պայմանագրում որպես Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցե նշված չէ: Բացի այդ, Գրությանը կցված չէր՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 20-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն կազմված բացասական եզրակացությունը և Պայմանագրով սահմանված ծառայությունների հանձնման-ընդունման չստորագրված արձանագրությունը:

1.7. 10.06.2021թ.-ին իր էլեկտրոնային փոստի հասցեին ստացել է «պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում» վերտառությամբ գրություն (այսուհետև նաև՝ Ծանուցում) որտեղ, ի թիվ այլնի, նշված է, որ Պատվիրատուն մասնակի միակողմանի հրաժարվում է Պայմանագրից, համապատասխանաբար համարելով լուծված: Սակայն Ծանուցման մեջ նշված չէ, թե Պայմանագրի որ մասից է Պատվիրատուն հրաժարվում կամ որ մասն է համարում լուծված:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները

2.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»:

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը վավերացվել է ՀՀ ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԱԺՈ-132-Ն որոշմամբ:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 25-րդ հավելվածի «Գնումների ոլորտին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն. «18. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել հնարավոր մատակարարներին և մատակարարներին ներկայացվող պահանջներ՝ (...) գնման պայմանագրերի կատարման ապահովման վերաբերյալ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը և ձևերը, ինչպես նաև գնումների պայմանագրի կատարման ապահովումը: Ընդ որում, գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի 5 տոկոսը, իսկ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը՝ գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը, (...):»:

Հրավերի 10.2 կետի համաձայն՝ Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին: Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը

պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է հավելված 4-ի կամ հավելված 4.1-ի համաձայն:

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հրավերի 10.3 կետի համաձայն՝ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավերով սահմանված պահանջներից հետևում է, որ գնման ընթացակարգին մասնակցած և այդ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու իրավունք ձեռքբերած մասնակիցը, պայմանագիրը կնքելու համար պատվիարտուին է ներկայացնում «Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները: Եթե մասնակիցը այդ ապահովումները չի ներկայացնում, ապա վերջինս զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից: Ընդորում, «Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները հանդիսանում են պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ապահովումներ, և այդ Ապահովումների չափը կազմում է պայմանագրի գնի 110% (հարյուր տաս տոկոսը): Նշյալից հետևում է, որ Հրավերով սահմանված դրույթները հակասում են ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերին, քանի որ ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերի համաձայն՝ գնման

պայմանագրի կատարման ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 % (երեսուն տոկոսը):

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք եզրահանգել, որ Մրցույթի շրջանակներում հարկավոր էր կիրառել ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված դրույթները և Ապահովումների չափը Հրավերով նախատեսել այնպես, որ դրանք չգերազանց էին տվյալ գնման առարկայի առավելագույն գնի (կանխատեսված ֆինանսական միջոցների) 30 % (երեսուն տոկոսը): Քանի որ ըստ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»: Հետևաբար, Ապահովումների վերաբերյալ Հրավերով նախատեսված պահանջները սահմանելիս անհրաժեշտ էր առաջնորդվել ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերով, և այդ Ապահովումների չափը հարկավոր էր սահմանել այնպես, որ դրանք չգերազանց էին Գնման առարկայի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը:

Ուստի կարող ենք եզրահանգել, որ Պատվիրատուն խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի և ԵԱՏՄ մասին պայմանագրի 25-րդ հավելվածի 2-րդ մասի 18-րդ կետի նորմերը:

2.3. Հրավերի 10.1 կետի համաձայն՝ որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները: Ընդ որում, նույն Հրավերի 10.2 կետի համաձայն՝ որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Հրավերի 10.3 կետի համաձայն՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:

Հրավերի վերոգրյալ դրույթներից հետևում է, որ Մրցույթի արդյունքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր կարող է կնքվել միայն այն դեպքում, երբ վերջինս պատվիրատուին է ներկայացնում որակավորման և պայմանագրի կատարման

ապահովումներ, ընդ որում, հրավերի համաձայն՝ այդ ապահովումները անհրաժեշտ է ներկայացնել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Հետևաբար, եթե մասնակիցը հրավերով սահմանված ժամանակահատվածում պատվիրատուին չի նարկայացնում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ, ապա այդ մասնակցի հետ պայմանագիր չի կնքվում իսկ կնքված պայմանագիրը շահագրգիռ անձի պահանջով կարող է ճանաչվել անվավեր, որպիսի հանգամանքներում այդ պայմանագիրը չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մասնակիցը չի ներկայացրել Պատվիրատուին Հրավերի 10.2 և 10.3 կետերով սահմանված՝ Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները: Նշյալից կարող ենք փաստել, որ Մրցույթի շրջանակներում Մասնակցի հետ պայմանագիր կնքվել չեր կարող, քանի որ Հրավերի համաձայն՝ Մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է միայն այն ժամանակ, երբ վերջինս Պատվիրատուին է ներկայացնում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները: Նշյալից էլ հետևում է, որ Պայմանագիրը կնքվել է Հրավերով սահմանված պայմանների խախտմամբ, հետևաբար ինչպես Պայմանագիրը, այնպես էլ Պայմանագրից ածանցվող մյուս գործարքները ենթակա են անվավեր ճանաչման: Որպիսի պայմաններում Պայմանագրով սահմանված դրույթները Պայմանագրի կողմերի համար չեն կարող առաջացնել իրավաբանական հտևանքներ:

Բացի այդ, եթե անգամ ենթադրենք, որ Պայմանագիրը կնքվել է օրենքով սահմանված կարգով, ապա միևնույն է Պայմանագիրը լուծվել է օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝ խախտվել են Պայմանագրի 3.1 կետի 2-րդ պարբերությունը և 3.3 կետը, ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետև նաև՝ Կարգ) 109-րդ և 110-րդ կետերը ու ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 20-ի թիվ 228-Ն հրամանը (այսուհետև նաև՝ Հրաման): Քանի որ ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու հիմքով Պայմանագիրը լուծելու համար՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը պետք է կազմեր բացասական եզրակացություն և այդ եզրակացությունը չստորագրված հանձնման-ընդունման արձանագրության հետ միասին ուղարկեր Մասնակցին: Այդ գործողությունները կատարելուց հետո է, որ Պատվիրատուի մոտ կարող էր ծագել Պայմանագիրը միակողմանի

լուծելու իրավունք, սակայն Պատվիրատուն խախտելով Պայմանագրի, Կարգի և Հրամանի նշյալ դրույթները Պայմանագիրը լուծել է առանց նշյալ գործողությունները կատարելու: Ավելին՝ 04.06.2021թ.-ի Գրությունը Մասնակցին ուղարկվել է մի էլեկտրոնային փոստից, որը նշված չէ ոչ Պայմանագրում, ոչ էլ Հրավերում: Այդ պատճառով է, որ Մասնակիցը ուշադրության չի արժանացրել նշյալ էլեկտրոնային նամակը և չի արձագանքել Գրությանը: Բացի այդ, Պատվիրատուն չի ներկայացրել որևէ ապացույց, որը կարող է փաստել, որ նկարներում պատկերված սպիտակեղենի տեսքը Մասնակցի մատուցած ծառայությունների հետևանքն է: Հարկ է նշել, որ Մասնակիցը միշտ ջանացել է իր ծառայությունները մատուցել ժամանակին և պատշաճ: Եվ նշյալ հանգամանքներում մենք կտրականապես ժխտում ենք այն, որ Գրությանը կից նկարում պատկերված սպիտակեղենի տեսքը Մասնակցի մատուցած ծառայությունների հետևանքն է:

Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ Պատվիրատուն Պայմանագիրը միկողմանի լուծել է ոչ օրինաչափ ձևով, ուստի կարծում ենք, որ Մասնակցին չի կարող վերագրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Թվանչկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2021/164 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Թվանչկ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բակի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021թ.-ը:

v. Պատվիրատուի և «Թվանչկ» ՍՊԸ-ի միջև 29.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունող հանձնաժողովի կողմից պայմանագրի կատարման մասին 04.06.2021թ.-ին կազմված եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ Մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ լվացքը հանձնվել է խոնավ վիճակում, վատ հոտով, լաքաներով և վնասված է:

vii. Եզրակացության համաձայն՝ ընդունող հանձնաժողովը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, մատուցված ծառայության թերությունները շտկելու համար սահմանել է 1 աշխատանքային օր ժամկետ:

viii. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունող հանձնաժողովի կողմից պայմանագրի կատարման մասին 08.06.2021թ.-ին կազմված եզրակացության համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ Մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված թերությունները:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 10.06.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.06.2021թ.-ի թիվ 01/10-425 ծանուցման համաձայն՝ «Վ. Ա.

Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Թվանչկ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լվացքատան ծառայությունների մատուցման թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 պայմանագիր:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ Հետվիրահատական անկողնային պարագաների /ինֆեկցիայով, արյունով և թարախով/ լվացում, բարձերի քիմ մաքրում: Թաց լվացքի քիմ մաքրում, ստերիլիզացիա լվացքից հետո անկողնային պարագաները պետք է պահպանված փնեն լիարժեք տեսքով՝ լաքաների, արյան և բետադինի հետքերը պետք է մաքրված փնեն: Լվացված լվացքը չպետք է գունաթափված փնի: Տհաճ հոտի առկայություն չպետք է փնի: Կատարողը անկողնային պարագաները Պատվիրատուին հանձնում է արդուկած և յոր վիճակում: Եթե անկողնային պարագաները վնասվեն Կատարողի կողմից, ապա Կատարողը պարտավորվում է փոխհատուցել նորով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «ա» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն մասնակի միակողմանի հրաժարվել է 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9852-2021 գրությամբ «Թվանչկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական

եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է

ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լվացքատան մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է,

որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Թվանչկ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքված թիվ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021թ.-ը: Պատվիրատուի և «Թվանչկ» ՍՊԸ-ի միջև 29.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը: «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունող հանձնաժողովի կողմից պայմանագրի կատարման մասին 04.06.2021թ.-ին կազմված եզրակացության համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ Մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ լվացքը հանձնվել է խոնավ վիճակում, վատ հոտով, լաքաներով և վնասված է:

Եզրակացության համաձայն՝ ընդունող հանձնաժողովը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, մատուցված ծառայության թերությունները շտկելու համար սահմանել է 1 աշխատանքային օր ժամկետ:

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունող հանձնաժողովի կողմից պայմանագրի կատարման մասին 08.06.2021թ.-ին կազմված եզրակացության համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ Մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված թերությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն մասնակի

միակողմանի հրաժարվել է 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17» պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 10.06.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.06.2021թ.-ի թիվ 01/10-425 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Թվանչկ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 10.06.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 10.06.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/10-425 ծանուցումը:

Պատվիրատուն կիրառելով Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթները, կազմել է պայմանագրի կատարման վերաբերյալ եզրակացություն, որի մասին ծանուցել է մասնակցին և տրամադրել ողջամիտ ժամկետ հայտնաբերված թերությունները վերացնելու համար, որոնք, սակայն, մասնակցի կողմից չեն շտկվել:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի «ա» ենթակետի հիմքով պայմանագիրը միակողմանիորեն լուծելու դեպքում, անհրաժեշտ է, որ մատուցված ծառայությունը չհամապատասխանի պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, ի հավաստումն որի Պատվիրատուն պետք է իրականացնի Կարգի 108-րդ, 109-րդ կետերի և 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված գործողությունները՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմի դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին, հակառակ դեպքում՝ բացասական եզրակացություն՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնելով պատվիրատուի ղեկավարին և ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և

պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պայմանագրի 7.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը (Մասնակիցը) համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:

Սույն գործում առկա փաստերով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, Համաձայնագրի կնքման և ներկայացման հետ միաժամանակ, չի փոխարինվել բանկային երաշխիքով կամ

կանխիկ փողով, քանի որ պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը չի գերազանցել գնումների բազային միավորի տասնապատիկը:

Վերոնշյալ դիտարկումներն քննարկելով և համադրելով Մասնակցի կողմից ներկայացված այն փաստարկներին, որ Պայմանագիրը և Համաձայնագիրը կնքվել են օրենքի խախտմամբ՝ Բողոքներ քննող անձը գտնում է անհիմն, քանի որ, ինչպես վերը նշվեց, Պայմանագիրը և Համաձայնագիրը կնքվել են Օրենքի 15-րդ, 35-րդ հոդվածների, Կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետի, 18-րդ կետի և 33-րդ կետի 12-րդ ենթակետի դրույթների պահպանմամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Թվանչկ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9852-2021 գրությամբ «Թվանչկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/164 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Թվանչկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**